

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Ց Մ Ե Ծ Ա Ց

Կ Ա Ր Ն Ո Յ Ք Ա Ղ Ա Ք

ՓՈՂՈՑՔ ԵՒ ՁԵՒ ՏՈՆՑՆ . ԵՒ ԶՈՒՄՐՃՈՒԹԻՒՆ ԲՆԱԿԶԱՑՆ . — Ամենայն փողոցք թաղիցն և շուկայիցն լայնարձակք են 'ի պատճառս երթևեկելոյ սայլից . և սալայատակ փողոցք բաց 'ի սակաւուց և 'ի շուկայէն , որ և այնպիսի անհարթ և անշնորհ , այլք առ հասարակ հողայատակք են աղտեղիք և դարչահոտ : Նմին իրի յերթևեկութենէ սայլիցն՝ փողոցն բարձրացեալ յօդս՝ և 'ի հողմոց անարգել մտանէ ընդ պատուհանս տանցն . թող զնեղութիւնն զոր կրեն անտի անցաւորք : Ընդ ամենայն քաղաքն չիք տեսանել տուն մի հոյակապ կամ գեղեցիկ ըստ արտաքին տեսլեանն բաց 'ի պալատանց հիւպատոսացն . որմունք նոցա թէպէտ և քարակերտք , այլ մեծաւ մասամբ տղմածեփք . գաւիթք առ հասարակ խաւարչտին , հողայատակ և անհարթ , սենեակք մթին և պատուհանք նոցա մանր . չիք աւելի քան զկրկնայարկ տուն բարձր . յորոց որ 'ի գետնի են և առաւել մթին , բնակին 'ի ձմերան առ անհնարին ցրտութեան օդոյն , իսկ վերնայարկքն ամարանոցք են . պատուհանք փոքր և անձևք ողորմելի տեսանելով , և չիք ապակի առ կասկածի բեկանելոյ 'ի ցրտոյ . բայց արդ սովորին դնել և զայն : Հողայարկ են տունքն առ հասարակ , զի չէ սովորութիւն աղիւսայարկս առնել . հողայատակք են նոյնպէս տանիքն . և յայն սակս սովորեցին հնարել զայդ ամենայն զի տոկալ կարասցեն ձմերային սաստկութեան . նմին իրի և որմունքն թանձր են , մանաւանդ որք անընդմիջաբար զսենեկօքն կան . և գերանք յարկացն խիտք և ստուարք , զի տոկալ կարասցեն ընդ ծանրութեամբ հողայարկին : Ի ցրտութենէ անտի բըռնադատեալ բնակչացն չածեն ընդ միտ զվայելութիւն շինուածոյն և զքարակերտ աստիճանս սանդղոց , այլ միայն խնուլ խցանել զամենայն ծակ ընդ որ մարթի հողմոյն 'ի ներքս անցանել . այնր աղադաւ և դրունք տանցն ցածունք և շրջապատեալ թաղեօք , և 'ի թիկանց քար ծանր ճախարակօք կախեալ որպէս զդրանց բաղանեացն , զի ընդ փակիլն բռնութեամբ՝ մի մնասցէ ծերպ : Համառօտ ասել , քաղաք մի մեծ է հողածեփ , չկայ նորա զբօսարան ծառատունկ ոչ 'ի ներքս և ոչ արտաքոյ : Զուարճութիւն բնակչացն է նուագարանօք զբօսնուլ 'ի կրպակս գաֆէի և 'ի տունս նուագածուք բազում են 'ի Հայոց և 'ի Տաճկաց , և նուագարանքն սննդ և քեմէկէ և սակրուռ : Նորատեսիլ իմն է օտարականի 'ի զնին կալ հանդիսի նոցա 'ի խմբարանի ուրեք , որպէս շարժումն տան կնդնտոցաց 'ի նախադրունս երգոցն՝ զոր փեշրեփ կոչեն , որ և այլ և այլ եղանակօքն տեւէ կէս ժամ առանց երգոց . ընդ որ ակումբն ամենայն հիացմամբ ակնկաւոյց կայ լուռ և եթ , զգածեալ կրաշարժ տխուր եղանակօքն , որ ախորժելին է ամենայն արեւելեայց . և ապա սկիզբն եղեալ կարգի երգոցն , այլ տեսարան յանդի-

ման լինի 'ի նուագածուացն, որոց ոգևորեալ իբրու 'ի վերին զօրութենէ ձայնս արձակեն եղերական հառաչմամբ. և տակաւ յառաջ մատուցեալ աղաղակաւ և կանչիւք վառեալ բորբոքին. կատողեաց իմն նմանեալ այնուհետև դարձուածովք աչացն, և երակօք փողիցն և ճակատուց սիւնաձև ուռուցելովք, և բերանք բացեալ թզաչափ, գոյնք դիմացն աստաչէկ իբրև արբեցելոց, և գլուխք իբրև 'ի մրրկէ տարուբերեալ՝ հողմավար ծոպիւք փաթութապատ գլխարկացն: Իսկ բանք երգոցն ամենայն՝ հասարակ ասացուածք են և ոչ ինչ նորալուր. սա, կայն որ յարիական ոգւոյ անակնկալ լին բանք, թէպէտ և ոչ զարմանալիք, մեծապէս ախորժելի են բազմականին, մինչև քրքիջ մեծ բառնալ և ազնիւ և անմահ կարգալ զնուագածուն կամ զգիւցազնն որոյ դիմառնութեամբն յերգ անկանի բանն:

ԱՐԿԱՅԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՋՈՒՐԳ. — Մ'ի յարգասաւոր դաւառաց համարեալ է կարին 'ի բերս ցորենոյ և դարւոյ, թէպէտ և յետ դաղթելոյ Հայոց 'ի Ռուսս բազումք յարտորէից դաշտավայրին անխնամ թողեալ մնան: Առատութիւն բերոցդ անբաւական էր նմա յաղագս բազմամարդութեանն, եթէ և արգաւանդագոյնն և հացաւէտն Բասեն ոչ շտեմարանէր նմա զարդիւնս իւր: Լինի 'ի կարին 'ի բանջարեղինաց բազում և թարխոն և կաղամբ և այլ այսպիսիք. այլ առաւելապէս շողգամ որ ոչ թեթև մխիթարութիւն է բնակչացն, որոց ըստ ժամանակին խումբ խումբ մեկնեալ 'ի քաղաքէն գնան յարտորայս բանջարոյդ իբրև 'ի պարտէզ սեխենեաց կամ խնձորոյ և նստեալ ուտեն. թէպէտ և զարդարն ասել, քան զսովորականն այլոց տեղեաց քաղցր է բանջարդ կարնոյ, յորոց լինին երբեմն և մեծամեծք մինչև կշուել միոյն օգգա մի: Այլ 'ի պտղոց ամենևին զուրկ է. զի պտղատու ծառ տակալ չզօրէ ցրտոյն բռնութեան որ վաղաժաման սկսեալ խամրեալ ապականէ զամենայն: Է զի յամենանն յունիսի իբրև զաւուրս ձմերայնոյ ձիւնապատ սպիտականայ երկիրն, որպէս եղև և յաւուր արևադարձին ամարայնոյ յամին 1845, և տևեաց 'ի նմին սաստկութեան աւուրս հինգ: Անարգասաւորութեամբ ստերջացեալ քաղաքիդ՝ ոչ թերանայ 'ի վայելիցն. զի բաց 'ի սակաւուց ազգաց պտղոց՝ այլովն ամենայնիւ առատ է, մատակարարեալ լիովի յեզնկայ և 'ի թորթումայ: Բայց առատութիւն ջուրց պարծանք են կարնոյ. յորոց է որ 'ի լերանց իջեալ 'ի հարաւոյ կուռէ քաղաքին և անցեալ ընդ առուակս արուարձանին խառնի 'ի Շամբն, զորմէ զկնի. և են որ առ տեղեան բղխեն թեթևագոյնք և բարեհամբ քան զառաջինսն: Նշանաւորք յաղբերացն են Նահառուակի աղբիւրն՝ զոր վերագոյն յիշեցաք, կաթնաղբիւր, ճեննէք փռնարի և աղբիւրն որ առ դրան պալատան փաշային:

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — կարնոյ քաղաքին թէպէտ և արտաքին տեսիլն և շինուածքն անշուք, և ցրտութեամբ օդոյն անսիրելի, և քաղաքականութեանն մասամբ ոչ քաջ բարգաւաճեալ, սակայն իսկզբանէ և այսր մի 'ի շահավաճառ քաղաքաց արևելից համարեալ է. ամենայն շահավաճառութիւն նորա է 'ի բազմութենէ երթեկելի վաճառականաց 'ի չրջարնակ քաղաքաց ևս և 'ի հեռաւոր տեղեաց, և մանաւանդ յանբաւութենէ կարաւանաց Պարսկաստանի, որոց անցեալ ընդ նա իջանեն 'ի Տրապիզոն, և դարձեալ անտի ընդ սա անցանեն 'ի Դավրէթ. կեդրոն համարեալ նորա շուրջ գաւառացն՝ վրաստանի յարևելից, 'ի հարաւոյ՝

Միջազեռաց, յարևմտից՝ Եւզոկիոյ, Սերաստիոյ և Կեսարիոյ, և ՚ի հիւսիսոյ աշխարհին Պոնտացոց: Ի շահավաճառութենէ անտի բազումք թողեալ զհայրենի երկիրն աստ կալան զբնակութիւն, և շատք ևս ուրք առ Ռուսս գաղթեալ էին դարձան վերստին: Առ այսոքիւք և այս ևս գիտելի լիցի զի յորմէ հետէ պակասեցին այլք ՚ի քաղաքաց արևելից ՚ի նախնի փարթամութենէն ՚ի պատճառս յաճախելոյ ձեռագործացն Եւրոպայ, զնոյն մնաս կրեաց և կարնոյ քաղաք. զի թէպէտ և արդ քառասնիւ չափ իջեւանք նորա լի իցեն վաճառականօք, և ընդարձակ տարածութիւն շուկային և ազգ ազգ արհեստագործաց, սակայն ըստ փոփոխել պետութեանն յայլ և այլ օրէնս քաղաքականութեան՝ և նախկին այն եռանդն առևտրոցն պակասեաց:

ՇԱՐԲ ԿԱՐՆՈՅ. — Գարասու գետ՝ որ յայլ և այլ գետակաց միացեալ յիջելոց յարևելից լերանցն և ՚ի ջրոյն Խաչափաշտի, յերկուս ընդմիջեալ զդաշտավայրն կարնոյ ՚ի հիւսիս և ՚ի հարաւ, և միացեալ ընդ գետոյն Սարչամայ՝ առ Գաղտառիճ գիւղիւ՝ անցանէ ընդ Շողանի ձորն, յարևելակողմն դաշտավայրին լճացեալ՝ Սազլըզ կոչի ՚ի բնակչաց, զոր նախնիք մեր Շաւք Կարնոյ ասեն. զի ՚ի դարնանի առատացեալ ջուրցն բուսուցանէ անբաւութիւն շամբից, զոր և ամարայնի ՚ի նուազել ջրոյն հնձեալ ՚ի բաղանիս քաղաքին վաճառեն: Ազգ ազգ հաւուց են ՚ի շամբիդ անբաւ բազմութեամբ, վկայեալ և ՚ի ծերունոյն խորնոյ, յորոց անուանի են վայրի բադ և սագ: Ի վերայ գետոյն երկու կամուրջք են քարաչէնք՝ մեծամեծք և բազմակամարք:

ԳԻԼՂՕՐԷՔ, ՋԵՐՄՈՒԿՔՆ ԵՒ ԱՂԱՀԱՆԲ ԿԱՐՆՈՅ. — Գիւղօրէք կարնոյ գաւառին սկսեալ յարևելից սիւռեալ կան ընդ երեսս մեծի դաշտավայրին ընդ հիւսիս ընդ արևմուտս և ընդ արևելեան հարաւ, սակաւք ՚ի ձորամէջս լերանց կամ առ կողիւք բլրոց. զուրկք ՚ի ծառոց, մերկ երևին ՚ի բազում հեռաստանէ տունք նոցին: Հնութիւնք սակաւ են ՚ի գիւղօրէս, և եղեալքն ոչ ինչ յաւելուած առնեն վաղեմի աւանդից հայաբնակ ժողովրդոցն որ ՚ի նոսա: Ի Գարաբաղ տակաւին երևին հիմունք նախնի շինուածոց քարակերտ և ամրաչէն. և զբլրակն՝ որ ՚ի մէջ գեղջն տեղի ամրոցի ասեն լեալ ՚ի հնումն. և հաւանօրէն սա է տեղի անուանի շահաստանին Արճն կոչեցելոյ, զոր քանդեցին և ՚ի հուր դատեցին Սէլուկ Թուրքք ՚ի ժԱ դարու: Փոքր մի հեռի ՚ի Գարարզայ ՚ի վերայ ճանապարհի Ղոշձի գեղջն խաչաքար մի կիսաթաղ անկեալ կայ ՚ի գետնի, և կիսեղծ յիշատակարանն ՚ի վերայ նորա այսպէս.

ԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ՅՈՎԱՆԷ... ՈՐԴԻ ԶՈՐՏՎԱՆԷԿԻ ԿԱՆԳՆԵՑԻ
 ԶԻԱԶՍ ԶԱՅՍ Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎԱՍԻԼԷ ԿՈՍՏԱՆԴԻՆ...

Ի Թոշանց ՚ի բարձրաբլուր եկեղեցւոյն ՚ի վերայ խաչաքարին որ առ դրամբ կայ նորա՝ ՚ի ձախմէ արտաքուստ ազուցեալ յորմն է յիշատակարանս.

ԻԹ. ՈԶԷ. ՔՐԻՍՏՈՍՏՐԻՆ Է ԽԱԶՍ:

Ի գերեզմանատան Հնձոց ՚ի ստորև խաչաքարին մեծի գրեալ կայ
 ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԵԱ ԳՈՐԳԱՅ ԱՄԷՆ.

և ՚ի կողաց նորա

ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԵԱ ԱՇԽԱՏՈՂԱՅ ՍՈՐԱ ԱՍՏՈՒԱԾԱՏՐ... ՊԱՏՈՍ...
 ԵՒ ՅԱԿՈՐԱՅ ԵՒ ՄԱԻՐ ՆՈՅԱՅ ԵՒ ՔԵՐՑ Ի ՔՈՒՄ ԳԱԼՐԱՍԵԱՆԴ ԱՄԷՆ.

ի Սարաձոր մօտ առ գերեզմանն խաչաքար մի կայ և արձանագիրն յածեալ 'ի բերանս ռամկին որպէս թէ գրեալ իցէ այսպէս . վեց գրիւ աղի ծախել աւուրն 'ի պէտս տան իւրոյ և նմին զուգահաւասար իւղ և հաց և այլ այսպիսի պարէնք , որչափ 'ի տունս թագաւորաց չծախին . և զայդ առասպել երէց ոմն գեղջն խորին կարգացող , որպէս կոչեն նորա , ընթերցեալ է 'ի խաչաքարին , և տաճիկ բարբառ ևս 'ի նմա . սակայն կանգուն կայ ցայսօր խաչաքարն և գրուածն 'ի վերայ մեծաւ մասամբ անեղծ , որ է այս .

ԿԱԶՄՕՂ ՍՈՐԱ ԶՅՈՎԱՆՆԷՍ . . ՈԶ ԵՄ ԱՐԺԱՆ . . ՅԻՇԵՍՁԻՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ԶՔԵՌՆ ԻՄ ԶՓՈԽԵՑԵԱԼՆ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ :

Քարոռոր է քարաժայռ մի 'ի ծայր ստորոտի լեռանց մօտ առ Գրիչք գեղջ . և փորեալ են 'ի նմա երկու սենեակք իբր երեք մարդաչափ բարձրութեամբ 'ի գետնոյ . տարածութիւն միոյն որ բաց է յառաջոյ կողմանէ՝ 30 մեղր քառակուսի . իսկ երկրորդին որ կից է նմին յահեկէ՝ 16 . երկրորդս այս կատարեալ սենեկաձև է դրամբ և պատուհանաւ : Ասի բան զսոցանէ եթէ Ֆէհրատայ ձեռագործք իցեն շինեալ վասն սիրուհոյն Շիրինայ , որ բնակէր 'ի գիւղն հանգիպակաց , ակնունելով առնուլ զնա 'ի կնութիւն . այլ 'ի կանխել օրհասի մահուն նորա՝ և ինքն Ֆէհրատ ձգեալ 'ի վեր զնիզն երկաթի մեռանի ընդ նովաւ . նոցին ասին լինել գերեզմանքն երկու որ 'ի վերայ լերինն 'ի վերուստ Քարուորայ :

Յարեմտակողմն դաշտավայրին 'ի գիւղն Աշխաւա է բլուր մի բարձրահայեաց և երկայնանիստ , զորմէ ասեն ամրոց լինել 'ի հնումն , որոյ հետք ևս չերևին արդ :

Ջերմուկք երեք են 'ի գիւղօրէս , յիլիձա , յԱրճաքի և յԱղուաղտ . և չորրորդ մի ցուրտ ջրոյ 'ի Սօռզ ջերմուկ : Առ հասարակ անյարկք են դորա , դուղնաքեայ որմովք և եթ չըջապատեալ մարդաչափ բարձրութեամբ . ընդարձակութիւն նոցա իբրև 'ի չափ մեծի սենեկի : Է և փոքրիկ լիճ մի ցուրտ ջրոյ առ Քեօսէ մեհմեհտ գիւղիւ Այղըր կեօլի կոչեցեալ , որ 'ի միջավայրէն բղխմամբ եռայ հանապազ :

Յարեմտից դաշտավայրին անդր քան զԱշխալա երկու աղաւնսն կան երկուստեք գետոյն . և զջրաղն այսպէս հանեն 'ի վեր . կարգ մի դորակաց ածեալ է զշրթայիւք զոր հոլովէ անիւ մեծ պտուտելով երիվարի . իջանեն դորակքն 'ի խորս անդ ուր շտեմարանն է ջրաղին , և վերացեալ թափեն արտաքս . որ և հոսեալ հաւաքի 'ի փոսս ոչ խորինս , և խտացեալ յարևուն խորտակեալ ժողովն :

ՎԱՆՈՐԱՅՔ . ՀՌԻՓՍԻՄԵԱՆՅ ՔԱՐԱՅՐՔ , ԵՒ ԻԱԶԱՒԱՅՏ . — Երեք են վանորայք 'ի դաշտավայրին կարնոյ . առաջինն ժամաւ հեռի 'ի քաղաքէն առ Մոռտուրկա գիւղիւ՝ կոչի Լոռասառոյլի վանք , բարձրանիստ և բարձրապարիսպ . քարաչէն է եկեղեցին փոքր՝ միախորան և անշուք . այլ է նորա ուխտատեղի յաւանդատան դուբ մի մարդաչափ և կէս խորութեամբ , ուր օթեվանս կալեալ ասի Լուսաւորչի յերթալն յԱրտաշատ : Գուքն պատեալ է շուրջանակի անտաշ քարամբք : Այլ հին արձանագիր չիք նորա և ոչ եկեղեցւոյն , նմին իրի անծանօթ մնայ ժամանակ շինութեանն : Առ երի դրան եկեղեցւոյն արտաքոյ յաջմէ թաղեալ կայ Սահակ վարդապետ Ահագինն կոչեցեալ , և վէմ մեծ և անգիր 'ի վերայ նորա և 'ի սնարիցն խաչաքար : Բնակարանք ուխտաւորացն փայտակերտք և նորաչէնք են : — Երկրորդն է Կարմիր վանք յանուն Աստուածածնի առ Հիւնձք գիւղիւ երեք ժա .

մաւ հեռի 'ի քաղաքէն . զառաջին շինութիւնն մեծին Ներսեսի ընծայեն . այլ կործանեալ յերկրաշարժէ վերստին շինեցաւ եկեղեցին որ քան զլուսաւորչին կրկնաչափ մեծ է և երեքխորանեան . 'ի չորից կողմանց կամարք են ձգեալ և 'ի վերայ ամբարձեալ գմբէթ սրածայր 'ի կարմիր քարանց : Բայ յեկեղեցւոյդ այլ ամենայն շինուածքն անշուք են և ողորմելի : — Կէս ժամաւ հեռի 'ի վանացս 'ի ձորամիջի որ պատեալ է յամենայն կուսէ 'ի կարմրագոյն քարալերանց՝ է ուխտատեղի Հռիփսիմեանց քարայրքն ասացեալ . և են նորա երկու փոքրիկ քարանձաւք մի քան զմի բարձր յերեսս լերին . մուտ նոցա նախ դիւրամուտ էր , և յետ ժամանակաց , որպէս երևի , հատորք լերինն զերծեալ 'ի մտից անտի մինչև 'ի վայր , որք և երևին ցարդ 'ի դետնի , անմատչելի գործեցին զքարայրսն . զի քարալերինքն այնպիսի գիւրափշրելի են և բռնութեան տարերց անտոկ : Սակայն աւանդեն եթէ Տաճկի ուրուք ելեալ իցէ անդ երբեմն 'ի վերին քարայրն անհնարին տառապանօք , և տեսեալ 'ի նմա փսիաթ մի և ափսէ : Չիք այլ աւանդութիւն զայսցանէ գրաւոր կամ անգիր : Ի դետնի տեսանին երկու աւերակք մատրանց և խաչաքարք և աղբիւր ցուրտ ջրոյ բղխեալ 'ի լեռնէ : — Երրորդ մեծ նաստանն է Խաչկայ վանք չորս ժամաւ հեռի 'ի քաղաքէն . փոքր քան զերկու առաջինսն , և եկեղեցին բարձրանիստ : Չիք 'ի սմա այլ ինչ նշանաւոր բաց 'ի մեծէ խաչաքարէն՝ որոյ արձանագիրն է .

Ի ԹՈՒ ՈՂԸ ԿԱՆԳՆԵՑԱԻ ԽԱՉՍ Ի ՅԻՇԱՏԱԿ ՏԷՐ ԹՈՐՈՍՈՒ
ԴԵՐՁԱՆԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ :

Աւանդութիւն այսպիսի կայ առ բնակիչս եթէ Հերակլի կայսեր առեալ զխաչափայտն և պահեալ 'ի Տուռլի լերին , յետ յաղթելոյ նորա թշնամեաց իւրոց և դառնալոյ , սքանչելեօք ջուր բղխեալ գտանէր 'ի տեղւոջն . և մասն մի 'ի խաչափայտէն շնորհէր տիկնոջ ուրումն որ զաւուրս երիս կերակրեաց զզօրս նորա . և զմասնն զայն աւանդեալ ասեն տիկնոջն յայս մենաստան : Իսկ տեղի պահեստի նշանին սրբոյ է 'ի վերայ Տուռլի լերին բարձու , առ որոյ ստորոտով է մենաստանդ երկու կամ երեք ժամուք հեռի 'ի նմանէ . և է տեղին բոլորաչէն փոս , և ջուրն 'ի նմա մշտաբուխ , այլ եռալ բղխման չերևի բնաւ , որ և ակննակիտ է այնպիսի մինչև մարթ է հաշուել զխիճս յատակին : Հռչակեալ է յոյժ բարեհամ առողջարարութիւն նորա , և ցրտութիւնն անհնարին յոյժ : Այս վայր է ահա խաչափայտ ասացեալն , և ջուրն Խաչափայտի ջուր , որ հոսեալ արտաքս 'ի փոսէն և չրջան առեալ ընդ զառիվայր լերինն եկեալ խառնի առ Կիրակոսակ գիւղիւ 'ի Գարասու գետ կարնոյ :

ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԲԱՆՔ ԶԲՈՇԱՅԻՑ ԿԱՐՆՈՅ

Յաղագս ազգաբանութեան և սերնդեան Բոչայից , որ ոչ սակաւք են յերկրիս կարնոյ , հաստատագոյնս ինչ չունիմ ասել . քանզի և ոչ նորա հաւաստեալ ինչ գիտեն զհաւուց և զնախնեաց իւրեանց՝ որոց սերունդք իցեն , և յորմէ աշխարհէ գաղթականք : Աւանդութիւն ռամկին որ բազում անգամ 'ի նմանութենէ իրացն հաւաստաբանել կարծէ , նոյնասերունդս ասէ զնոսա՝ Չինկեանէ կոչեցեալ խառնաղանճին , զոր եզիպտական ազգին մնացորդս ասեն , և անյի-

չատակ ժամանակաւ տարաշխարհիկ եղեալ փախստեամբ յերկրէն յայնմանէ . յորոյ մասամբ զքրիստոնէութիւն պատուեալ , այլք առ հասարակ դարձան 'ի մահմէտականութիւն : Չրոյց աւանդիցդ թէպէտ և չունիցի երաշխաւորել զան- երկրայ ճշմարտութիւն իրացն , այլ այս հաւաստի է զի տարազ կենաց Բոշայիցդ զՉինկեանէիցն տպաւորագոյնս ստուերագրէ . զի նոյն օրինակ շատաշրջիկք են 'ի գիւղօրէս , անտուն և անհաստատ ուրեք , զնոյն արհեստ վարեալ փոքու իւկք շատանան , և ոչ նախատինս անձանց համարեալ զձայնդ Բոշայ . միայն զի չեն իբրև զնոսս վայրենամիտք և անգէտ կրօնիցն զոր ունին . այլ քրիստոսական կրօ- նիւ մեղմեալ են յոյժ 'ի մասինդ . ժամասէրք են և երկիւղածք և առ 'ի խոր- հուրդս մերձենալ ոչ անփոյթք . և շատք այլովք ևս աստուածապաշտ վարուք չխտրին բնաւ 'ի հայազգեաց քրիստոնէից , այսու ևեթ զատեալ որոշեալ զի խը- նամութեամբ չկարեն խառնիլ ընդ նոսս . շառնու որ յանձն զդուստր իւր Բո- շայի հարսնացուցանել , կամ զդուստր նորա ածել 'ի տուն իւր : Ձլեզու Բոշայից լուեալ ուրուք թերևս մի 'ի հնոց լեզուացն կարծեալ՝ քննութեան ինչ արժանի համարիցի . զի ըստ նոցին վկայելոյ յանձնէ ճարտարեալ է նոցա զայդ , զոր վա- ընն միշտ երբ զգաղտնի ինչ իրաց զրուցել կամիցին . նմին իրի և յոյժ աղքատ է լեզուն այն և հայերենիւ խառն : Ախորժ ինչ արարեալ համարիցիմ , եթէ փոքր մի տաց վերժանել հետաքնին անձանց զմանս 'ի բառից , յորս նշմարեսցի ոչ սակաւ հանգիտութիւն հնդկագերման լեզուաց :

Մանուս . մարդ . (սանսգր .)	Արավ . ալիւր :	Բարբար . ընդդէմ :
Սխորով . թագ . (զլխաւոր) .	Գիհու . ցորեան :	Կեղտուք . որքան :
Որով . իշխան , փաշա .	Չավ . գարի :	Պաշտան . ընդ , 'ի միասին :
Սիս . զլուխ :	Կլառ . պանիր :	Կատէլ . մուր :
Ա.բի . աչք :	Քըլ . եղ :	Խաթել . ուտել :
Լանք . քիթ :	Խալիվ . միս :	Պիել . ըմպել :
Մուհ . բերան (Mouth անգլ .)	Մանչավ . ձուկն :	Չիել . երթալ :
Գոնճ . մորուք :	Լաւալիչ . վառելիք :	Սոլիկարել . խօսիլ :
Ա.գ . ձեռք :	Ճահրի . մաղ :	Բանել . ասել :
Պավ . ոտք :	Չուրի . դանակ :	Սընքել . իմանալ :
Պէրը . սիրտ :	Գար . տուն :	Լեքել . տեսնել (Look . անգլ .)
Մանճ . մէջք :	Բար . դուռն :	Մանկել . կամիլ :
Խարի . էջ . (պրսկ .)	Նակավ . երգիք :	Փարել . զգենուլ :
Քօրի . ձի . (քուռակ) :	Բավկաշ . ոտնաման :	Նկալել . մերկանալ (Nackt ,
Քօրվավտիք . ձիան :	Բարիչ . ագանելիք :	մերկ . գերման .)
Խարվավտիք . իշեան :	Սիսիսուլ . զլխարկ :	Վեսել . նստիլ .
Լէվալ . Աստուած :	Խարվավ . գրամ :	Նկլել . ելանել :
Տրէսուլ . եկեղեցի և եկեղե- ցական :	Լեհի . գիւղ :	Ավել . գալ .
Նահլավ . կրակ :	Քէրավ . քաղաք :	Նասուհել . փախչել :
Թէնավ . գետին :	Սուտաֆ . քուն :	Վչալել . առաքել :
Թուլի . հող :	Սուլ . լուր .	Չուչել . կուռել :
Վար . քար :	Լես . կեանք :	Բարբարուտլուիլ . ընդդիմա- նալ .
Կահր . փայտ :	Կամ . իր , գործ :	Կուրել . հարկանել :
Բանի . ջուր :	Սամէլ . բարի :	Մարկարել . սպանանել :
Մալավ . հաց :	Աք . մի (եէք , պրսկ .)	Մուլիլ . մեռանել :
Խաթելու . ուտելիք :	Լուի . երկու (Duo) .	Մանճուհիլ . մնալ :
Անքոր . ընկոյզ :	Լաս . Տասն :	Պանթել . կապել :
Անսեվ . խնձոր :	Պանիիչ . հարիւր :	Ուրլել . բանալ . քակել :
Անլօ . հաւկիթ :	Հէվ . այս :	
Բանդրի . հաւ :	Հէվակ . այս կոյս :	
	Հավի . վերստին :	